

ՎՐԱՍՏԱՆ

«ՅՐԱՆՅՈՒՆ» (ՆԱՅՅՐՈՒՅՅՈՒՄ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 73 - 74 (17182) ՇԱՐԱԹ 16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՐԹԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

ՆՈՐ ՆԱԽԱՁԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ Է ՏԱՄԱՅԱԿՆԵՐԻ ՊՍՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ՇԻՄԱՄՆԻՐԸ

Սեպտեմբերի 11-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:
Նիստի մեկնարկում վարչապետն անդրադարձավ տարերային աղետի գոտիներում աղետի հետևանքների վերացման, տուժյալներին օգնություն ցուցաբերելու, ապօրինաբար սեփականաշնորհված պետական հողամասերի, կրթաթոշակների հետ կապված եւ այլ հարցերի:



ԱՂԵՏԻ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԲՈԼՈՐ ՉՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒՐԻՆԻՉԱՑՎԵԼ ԵՆ

Ինչպես նշեց վարչապետը, կառավարության հանձնարարությամբ մոբիլիզացվել են բոլոր հնարավորությունները տարերային աղետի հետևանքների վերացման ուղղությամբ:

- Առանձնապես ծանր իրավիճակ էր Օգուրգեթի եւ Լանչխուլի մունիցիպալիտետներում: Ընդհանուր առմամբ՝ աղետի գոտում մոբիլիզացվել էր շուրջ 200 փրկարար, որոնք գործում էին աղետի 22 գոտիներում,- ասաց վարչապետը:

ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՍԵՓԱԿԱՆՏԵՐԵՐԻՆ

Անդրադառնալով տարիների ընթացքում քաղաքացիների կողմից ապօրինաբար սեփականաշնորհված պետական սեփականության ներքո գտնվող (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵՎՐԱՆՏԵԳՐՈՒՄ

ԱՆՅՎԱՅՎԵՅ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 68-ՐԴ ՆԻՍՏԸ

Սեպտեմբերի 14-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու գլխավորությամբ, անցկացվեց Վրաստանի եվրամիությանն ինտեգրման հանձնաժողովի 68-րդ նիստը:



Կառավարության աշխատակազմում կայացած նիստում հանձնաժողովի անդամները քննարկեցին Վրաստանի քաղաքական, տնտեսական հասարակական կյանքում շահերի ավելորդ ազդեցության կանխման, «ապաստիզարիացման գործողությունների ծրագիրը», որը մշակվել է Վենետիկի հանձնաժողովի եվրամիության հանձնարարականների հիման վրա:

Չոր տարբեր ուղղություններ, այդ թվում՝ հակակոռուպցիոն հակամենաշնորհային ուղղություններ, փողերի լվացման լրատվամիջոցների բազմակարծության հարցեր, ինչպես նաև արդարադատության ոլորտում իրականացվելիք միջոցառումներ:

Կառավարության կողմից փաստաթուղթը ստանալուց հետո, աշխատանքային գործընթացը կփոխանցվի Վրաստանի խորհրդարան:

ԿՐԹԱԿԱՆ

ԵՎ ՆՈՐԻՅ՝ ՀՆՉԵՅ ԴԵՊԻ ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ ՏԱՆՈՂ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ



Վրաստանի հանրակրթական դպրոցներում սեպտեմբերի 15-ին մեկնարկեց նոր՝ 2023-2024 ուսումնական տարին: Երկրի ողջ տարածքում ուսումնական գործընթացը սկսվեց 2085 հանրակրթական դպրոցներում:

Այս տարի զանգվածային առաջին անգամ հնչեց ավելի քան 55 000 առաջին դասարանցիների համար, որոնցից 48 000 առաջին դասարանցի գրանցված է հանրակրթական դպրոցներում, մոտ 7000-ը՝ մասնավոր դպրոցներում:

Ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ աշակերտներին, ուսանողներին, մանկավարժներին շնորհավորեց Վրաստանի կրթու-

թյան եւ գիտության նախարար Գիորգի Ամիլախվարին:

«Այսօր սեպտեմբերի 15-ն է, մենք սկսում ենք նոր ուսումնական տարին երկրի դպրոցներում: Այս օրվա կապակցությամբ, ուզում եմ հատկապես շնորհավորել մեր առաջին դասարանցիներին, ովքեր այս տարի առաջին անգամ են բացելու դպրոցի դռները: Շնորհավորում եմ աշակերտներին, ծնողներին, մեր ուսուցիչներին մաղթում հաջող ուսումնական տարի», - ասված է նախարարի շնորհավորական ուղերձում:

(Թեմայի շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը ՆՈՐԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՄՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

Սեպտեմբերի 21-ին նորանկախ Հայաստանը եւ համայն հայությունը նշում են Անկախության հռչակման 32-րդ տարեդարձը:



Հայաստանի Անկախության մասին հռչակագիրն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում՝ 1990թ. օգոստոսի 23-ին: Հռչակագրով լուծարվեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, եւ հռչակվեց անկախ Հայաստանի Հանրապետություն: Հայաստանի Գերագույն խորհրդի որոշմամբ՝ 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրաքվե

անցկացվեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին: Չայնի իրավունք ունեցող քաղաքացիների 94,99 տոկոսը «կողմ» քվեարկեց անկախությանը:

Սեպտեմբերի 23-ին Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԻՐԱՎԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ՀԱՆԴԻՊԵՅ ՆԻՊԵՐԼԱՆՊՆԵՐԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՄՊՍԸ ՄԵԼԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 11-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին ճանաչողական հանդիպում ունեցավ՝ Վրաստանում Նիդերլանդների Թագավորության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Մելինե Առաքելյանի հետ:

Կառավարության վարչապետն ու կայսրացի հանդիպմանը քննարկեցին Վրաստանի եւ Նիդերլանդների Թագավորության միջեւ համագործակցության հիմնական ուղղությունները:



«Քննարկված հարցերի թվում էին Վրաստանի եւ Նիդերլանդների Թագավորության միջեւ առկա հարաբերությունները, որոնք բնութագրվում են աճող դինամիկայով ինչպես երկկողմ անկարողակով, այնպես էլ՝ միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

Հանդիպմանը ուշադրություն հատկացվեց Վրաստանի եվրախնտեզման գործընթացին: Կառավարության ղեկավարը դեսպանին տեղեկացրեց Վրաստանի ձեռք բերած առաջընթացի եւ 12 հանձնարարականների կատարման հետ կապված ներկա իրավիճակի մասին: Նա նշեց նա-

եւ, որ, մինչեւ տարեվերջ, Վրաստանը սպասում է թեկնածուի կարգավիճակին:

Վարչապետն ընդգծեց Վրաստանին թեկնածուի կարգավիճակ տրամադրելու եւ այդ գործընթացում Նիդերլանդների Թագավորության աջակցության կարևորությունը:

Իրակլի Դարիբաշվիլին շնորհավորեց Մելինե Առաքելյանին Վրաստանում դիվանագիտական առաքելության մեկնարկի կապակցությամբ եւ հաջողություններ մաղթեց հետագա գործունեության մեջ», - ասված է վարչապետի մամլո ծառայության հարադրագրության մեջ:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԵՄ. 80 ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՐ ՆԱԽԱԳԱՀԻ ԻՄՓԻԶՄԵՆՏԻ ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, «Վրացական երազանք» կառավարող կուսակցությունը երկրի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլուն մեղադրեց Վրաստանի սահմանադրության կոպիտ խախտման մեջ (առանց կառավարության համաձայնության՝ նախագահին իրականացրեց արտասահմանյան այցեր) և սկսեց նախագահի իմփիչմենտի գործընթացը:

Վրաստանի խորհրդարանի ընթացակարգային հարցերի և կանոնակարգի հանձնաժողովը, սեպտեմբերի 11-ի նիստում, քննարկեց երկրի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու իմփիչմենտի հետ

կապված սահմանադրական առաջարկի վերաբերյալ պատգամավորների ստորագրությունների խնդրանքի հարցը, և Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու պաշտոնակազմի առաջարկ

կով Սահմանադրական դատարան ներկայացվեց դիմում՝ 80 պատգամավորի ստորագրությամբ:

Նշենք, որ Սահմանադրական դատարանը մեկամսյա ժամկետ ունի եզրակացությունը ներկայացնելու համար:

Դատարանի դրական եզրակացության դեպքում, նախագահին հեռացնելու համար, անհրաժեշտ է 100 պատգամավորի ձայն, ինչը «Վրացական երազանքի» մեծամասնությունը չունի:



ՌՈՒՍԱՍՏԱՆ - ԳՅՈՒՄՆԱԿՆԻ ԿՈՐԵԱ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲԱԼԱՍՏԻԿ ՀՐԹԻՈՒ ԱՐՁԱԿՈՒՄՑ ԺԱՄԵՐ ԱՆՑ

Սեպտեմբերի 12-ին, Յուսիսային Կորեայի կողմից 2 բալիստիկ հրթիռի արձակումից ժամեր անց, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը և ԿԺԳ ղեկավար Կիմ Չեն Ընը հանդիպում են անցկացրել Ամուրի մարզի «Վոստոչնի» (Արևելյան) տիեզերակայանում:

Վլադիմիր Պուտինը տիեզերակայանում շրջայց է անցկացրել՝ իր հյուսիսկորեացի գործընկերոջ հետ: Կողմերը քննարկել են երկկողմ համագործակցության հարցեր, իրավիճակը տարածաշրջանում և, ընդհանրապես, աշխարհում:

Նշենք, որ Ռուսաստանի և Յուսիսային Կորեայի ղեկավարների նախորդ համդիպումը կայացել էր Վլադիվոստոկում, 2019 թվականին:

ՍԱՐՈԿԿՈ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՂԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱՋԱՆՑԵՑ 2800-Ը

Մարտկոյուն սեպտեմբերի 8-ի ուշ երեկոյան 6,8 մագնիտուդով երկրաշարժ է տեղի ունեցել: Եպիկենտրոնը գտնվել է մոտ 11-18 կմ խորության վրա՝ Մարաբեշից 70 կմ հարավ:

Մարտկոյուն տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով զոհերի թիվը գերազանցել է 2800-ը, տուժածների թիվը հասել է 2562-ի:

Երկրաշարժը դարձավ ամենաուժեղը վերջին 120 տարվա ընթացքում, ընդ որում, Յուսիսային Աֆրիկայում նման տարերային աղետները համեմատաբար հազվադեպ են տեղի ունենում: Սեպտեմբերի 10-ին Մարտկոյունի թագավոր Մուհամեդ 4-րդը եռօրյա սուգ է հայտարարել:

ԼԻԲԻԱ 11 300 ՄԱՐԴ ՓՈԹՈՐԻԿՆԵՐԻ ԵՎ ԶՐԳԵՂԵՂՆԵՐԻ ԶՈՂ

Լիբիայում ուժեղ փոթորիկների և ջրհեղեղների հետևանքով՝ առնվազն 11 300 մարդ է զոհվել, 20 հազար մարդ անհետ կորել է:

«Դանիել» փոթորիկը Դեռնայում ավերել է հազարավոր շենքեր ու վնասել ավի երկայնքով գտնվող այլ բնակավայրեր, այդ թվում՝ Լիբիայի մեծությամբ երկրորդ քաղաք Բենդախին:

Լիբիայի արևելքում գտնվող խորհրդարանը երկրում եռօրյա սուգ է հայտարարել:

ԳԵՐՄԱՆԻԱ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՍԵԼ Է ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ

Այլ երկրներից Գերմանիա ներգաղթած է այժմ այնտեղ բնակվող մարդկանց թիվը, վերջին տասնամյակների ընթացքում, հասել է առավելագույն մակարդակի: Ընթացիկ տարվա հունիսի վերջի դրությամբ՝ օտարերկրացիների կենտրոնական ռեգիստրում որպես փախստական հաշվառված է եղել 3,26 մլն մարդ՝ 111 հազարով ավելի, քան 2022 թ. վերջին:

Սա 1950-ականներից ի վեր ամենաբարձր ցուցանիշն է: Այստեղ ընդգրկված են փախստականներ, այդ թվում՝ ռազմական հակամարտություններից, ապաստան հայցողներ և մարդիկ, որոնց մերժել են ապաստան տալ, սակայն թույլ են տվել որոշ ժամանակ մնալ երկրում, քանի որ նրանց վտարումն անհար է հունամիտար պատճառներով: Նրանցից շատերն արդեն մի քանի տարի կամ նույնիսկ տասնամյակներ ապրում են Գերմանիայում:

ՇԱԼՎԱ ՊԱՊՈՒԱՇՎԻԼԻ. «ԵՐԹ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՈՐՈՇԻ, ՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՄՆՏՎԵԼ Է, ԴԱ ԿԼԻՆԻ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ»

Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավա Պապուաշվիլին, մեկնաբանելով նախագահի իմփիչմենտի շուրջ ծավալված իրադարձությունները, նշեց, եթե Սահմանադրական դատարանը որոշի, որ խախտվել է Սահմանադրությունը, ապա դա արդեն նախագահի գործունեության իրավական, ինչպես նաև բարոյական գնահատական է:

- Ինչ վերաբերում է իմփիչմենտի հարցին, ապա այստեղ մեզ համար ամենակարևորն այն է, որ Սահմանադրական դատարանն այս հարցը քննարկի և իր օրինական վճիռը կայացնի: Մենք ասացինք, որ Վրաստանի խորհրդարանում հնարավոր չէ 100 ձայն հավաքել: Մենք տեսնում ենք նաև, որ ընդդիմությունը, իհարկե, պայքարում է այս հարցում: Այն ամենը, ինչը հակասում է սահմանադրությանը, այն ամենը, ինչը կարող է պառակտում բերել, իրենց համար շահավետ է և ընդու-

նելի, դրա համար էլ հաստատ չեն աջակցի իմփիչմենտին, բայց Սահմանադրական դատարանի քննարկումը կարևոր է: Եթե դատարանը որոշի, որ սահմանադրությունը խախտվել է, դա, իհարկե, արդեն իսկ նախագահի գործողությունների իրավական, ինչպես նաև բարոյական գնահատական է, - ասաց Շավա Պապուաշվիլին:



ԸՆԴԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԴԵՄ ԻՄՓԻԶՄԵՆՏ Ե ԴԱՏՐԱՍՏՈՒՄ

Վրաստանի ընդդիմադիր «Լեյն» կուսակցությունը խորհրդակցություններ է սկսում ընդդիմության հետ՝ վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու իմփիչմենտի ընթացակարգ սկսելու համար:

Հատկանշական է, որ Վրաստանի կառավարության անդամին, իմփիչմենտի կարգով, պաշտոնանկ անելու հարցը իրավունք ունի բարձրագույնը 50 պատգամավոր:

Ինչպես նշեց «Լեյն»-ի պատգամավոր Սալոմե Սամադաշվիլին, իրենք, ընդդիմության հետ, խորհրդատվություններ են սկսում, այդ հարցում միասնական ճա-

կատ ստեղծելու համար: Նրա խոսքով, կոռուպցիայի դեմ պայքարն այն նպատակն է, որին ծառայում է Դարիբաշվիլու իմփիչմենտը:

- Դարիբաշվիլին որդուն ուղարկում է Ամերիկա սովորելու՝ համալսարան, որտեղ որակյալ պաշտպանությունը վարչապետի ընտանիքի վրա, ի վերջո, կարծենա միջուկ միլիոն լարի: Բայց սա բա-

վարար չէ վարչապետին, և նա կարծում է, որ կարող է Վրաստանի նախագահին մերժել պաշտոնական այցեր կատարել և, միաժամանակ, կառավարական ինքնաթիռն օգտագործել որդուն ուսման տանելու համար, - ասաց Սալոմե Սամադաշվիլին:

Նշենք, որ կառավարող թիմը հերքում է տարածած տեղեկատվությունը և նշում, որ վարչապետը, իր ավագ որդու՝ 18-ամյա Նիկոլոզ Դարիբաշվիլու հետ, ԱՄՆ է ուղևորվել սովորական ուղևորատար ինքնաթիռով:

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ



ԻՐԱՎԻ ԲԱՐՍԵԼՅԱՆ. «ԱՅՍ ՏԱՐԻ ՌԻԿՈԹԻ ԼԵՌՆԱՆՑՔՈՒՄ ՇԱՐՎԱԳՈՐԾՄԱՆ ԿՐԱՆՁՆՎԻ ԵՐԿՈՒ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՀԱՏՎԱԾ»

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցների նախարար Իրակլի Բարսեղյանի խոսքով՝ Ռիկոթի լեռնանցքում ճանապարհների կարգավորման աշխատանքներն ակտիվ առաջ են ընթանում և այս տարի շահագործման կհամընկնեն երկու մշանակալի հատվածներ:

Նախարարի խոսքով, Ռիկոթի նոր գլխավոր ճանապարհի նախագծով նախատեսված 51 թունելներից 45-ը արդեն հատվել

են, 97 կամուրջից կառուցվել է 81 կամուրջ և այս պահին Ռիկոթի գլխավոր ճանապարհի նախագծով նախատեսված աշխատանքների 86 տոկոսն ավարտվել է: - Ավտոտրանսպորտն արդեն օգտա-

գործում է 12 թունել և 22 ավարտված կամուրջ: Այս պահին Ռիկոթի գլխավոր ճանապարհի նախագծով նախատեսված աշխատանքների 86 տոկոսն ավարտված է, - նշել է Իրակլի Բարսեղյանը:

ՏԱՐԵՐ

ՇՈՎԻ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ 32-ՐԴ ԴԻՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, օգոստոսի 3-ին Օճիի մունիցիպալիտետի Շովի հանգստավայրում տեղի ունեցած սելավահոսքը դարձավ մարդկային զոհերի և մեծ ավերումների պատճառ: Դեռ այդ օրվանից աղետի գոտում որոնողակրկարարական զանգվածային աշխատանքներ ծավալվեցին, որի արդյունքում հայտնաբերվել էր 31 դի, երկու դեռահաս համարվում էր անհետ կորած:

Օրերս Վրաստանի ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների կառավարման ծառայության իրշեջները, Ռաճայում ճանճախի գետի հունում, հայտնաբերել են ես մեկ դի:

Օճիի մունիցիպալիտետում՝ աղետի գոտում հայտնաբերվել

է 32 դի, մեկ անձի որոնողական աշխատանքներն ակտիվ շարունակվում են: Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին նշեց, որ ընդունվել է որոշում, ըստ որի՝ միամիտ գրամական օգնություն կտրամադրվի մահացածների ընտանիքներին՝ յուրաքանչյուր մահացածի համար 20 հազար լարիի չափով:

ԼԱՆՉԽՈՒԹԻ ՄՈՒՆԻՅՈՒՄԱԿՆԵՏՈՒՄ ԸՆՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԶՐԶԵՂԵՂԻՑ ՏՈՒԺՅԱԼՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԵՏԻ ՇԵՏՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գուրիայի տարածաշրջանի Լանչխուսի մունիցիպալիտետում շարունակվում են աղետից տուժածների օգնության և աղետի հետևանքների վերացման աշխատանքները: Գուրիայում աղետի հետևանքով 306 ընտանիք ենթակա է վերաբնակեցման:

Գուրիայի տարածաշրջանի պետական լիազոր Գիորգի Ուրուշաձեի խոսքով, երկրաբանները ստուգել են 643 տուն, որոնցից 306-ի դեպքում բացասական եզրակացություն է տրվել:

Նրա խոսքով, մինչ օրս, 40 բաժանորդի էլեկտրաէներգիա չի մատակարար-

վում, իսկ 432 բաժանորդ մնացել է առանց բնական գազի:

- Մարդասիրական օգնություն է ցուցաբերվել ավելի քան 1200 ընտանիքի, հյուրանոց է տեղափոխվել 218 մարդ, իսկ 514 ընտանիք ապահով վայրում է, - ասել է Գիորգի Ուրուշաձեն:



Հիշեցնենք, որ օգոստոսի 8-ին տեղի ունեցած տարերային աղետի պատճառով, Գուրիայի մունիցիպալիտետի բազմաթիվ գյուղեր տուժել են:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՏԱՐԱԾԱՆԵՐԱՆ

ՎՐԱՍԱՆԻ ՀԻՆԱՎՈՐԻՅ ՔԱՂԱՔՆԵՐԻՅ ՄԵԿԸ՝ ԱՆԱԼՔԱԼԱՔԻՆ ՆՇԵՅ՝ ԻՐ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 959-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁ

Սեպտեմբերի 9-ին Ախալքալաքին նշեց քաղաքի հիմնադրաման 959-րդ տարեդարձը: Դրանով Ախալքալաքին իր պատվավոր տեղն է զբաղեցնում Վրաստանի հիմնավոր քաղաքների՝ Քութայսիի, Թբիլիսիի, Սցխեթայի, Գորիի, Թելավիի շարքում:

Ախալքալաքիի օրվա կապակցությամբ ախալքալաքցիներին շնորհավորեցին Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, Սամցխե-Ջավախեթիի փոխնահանգապետ Դավիթ Վարդիաշվիլին եւ տեղական ինքնակառավարումների հետ հարաբերությունների ծառայության պետ Իոսեբ Ալիբեգաշվիլին: «Ախալքալաքի-2023» տոնին մասնակցեցին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը, Ախալքալաքիից եւ Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Սամվել Մանուկյանը, խորհրդարանի համամասնական պատգամավոր Սմբատ Կյուրեղյանը, Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը, Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը, Ախալցխիսի, Բորժոմիի, Ասպինձայի, Արդանի քաղաքապետներն ու սակրեբուլոյի նախագահները:

Քաղաքի կենտրոնական զբոսայգում «Ախալքալաքի-2023»-ի օրվա առիթով անցկացվեցին խորհրդանշական միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, անհմացիոն հերոսների շոու, երեսխանների համար ժամանցային ծրագրեր, սպորտային մրցույթներ, տեղական արտադրանքի եւ ձեռագործ աշխատանքների ցուցահանդես-վաճառք: Օրերս Գուրիայի տարածաշրջանում տեղի ունեցած բնական աղետների պատճառով Ախալքալաքիի օրվան նվիրված միջոցառումների մի մասը չեղյալ հայտարարվեց:



բնական աղետների պատճառով Ախալքալաքիի օրվան նվիրված միջոցառումների մի մասը չեղյալ հայտարարվեց:

ՆԻՆՈՇՄԻՆԳԱ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԸ՝ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՀԵՏ ՀԱՆԳԻՊՄԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ



Սեպտեմբերի 14-ին Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը հանդիպեց Գանձազյուղում ապրող կանանց հետ: Հանդիպումը

կազմակերպել էր Սամցխե-Ջավախեթիի Սեդիա կենտրոնը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին այն հարցերը, որոնց լուծումը առաջնային է Գանձայում ապրող կանանց համար: Հանդիպմանը մասնակցեցին քաղաքացիական ներգրավման անդամներ:

ԱՆԱԼՅԻՆԵ. ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅԻ ԸՆԳՎԻՄԱԴԻՐ ԽՄԲԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՇԱՐՎԵՅ

Վրաստանի ինքնակառավարման 2021 թվականի ընտրություններում ընդդիմադիր կուսակցություններից ամենամեծ աջակցությունն ունեցող կուսակցությունը՝ Վրաստանի Սամցխե-Ջավախեթիի մարզի Ախալցխիսի սակրեբուլոյի «Միացյալ ազգային շարժում» խմբակցությունը, լուծարվել է: Խմբակցությունը լքած պատգամավորների խոսքով՝ կուսակցությունում ոչ մի անդամ չի մնացել, նրանք խմբակցությունից դուրս են եկել, որ դառնան անկախ պատգամավորներ: Ի դեպ, սա առաջին դեպքն է, երբ «Միասնական ազգային շարժման» անդամները լքում են կուսակցությունը՝ նոր նախագահի՝ Լեւան Գոցիի շրջափոխումից հետո: Նույնը տեղի ունեցավ խորհրդարանում, Ռոման Գոցիի թեմն եւ խատիա Դեկանոի թեմն կուսակցությունն ու խմբակցությունը:

ՄԱՐՆԵՈՒԼԻ. ՔԱՂԱՔԻ ՕՐԸ ԿՆՇՎԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ

Քվեմո Քարբիի տարածաշրջանի Մառնեուլի քաղաքին նվիրված «Մառնեուլը 2023» տոնը կնշվի սեպտեմբերի 17-ին: Մառնեուլիի Կենտրոնական զբոսայգում անցկացվող միջոցառմանը կներկայացվի 18 համայնք, յուրաքանչյուր համայնք կներկայացնի իրեն բնորոշ ավանդույթները, մշակույթը, երաժշտական համարները: Տեղի կունենա նաեւ մրցանակաբաշխություն, որտեղ կպարգևատրվեն «Պատվավոր մառնեուլցի» «Տարվա լավագույն մարզիկ», «Տարվա լավագույն արտիստ» կոչումների համար: Նրանց կտրվի «Կրկին կվերածնվեն» մետաղական հուշանվեր եւ 1000 լարի դրամական պարգև: Նշենք, որ միջոցառման կազմակերպիչը, «Մառնեուլը 2023» տոնի համար հայտարարված մրցույթում հաղթած, «Սթոր» կազմակերպությունն է:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ «ԳՈՏՈՒ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՆ» ՉՈՐՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Սեպտեմբերի 11-13-ին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը, «Գոտու եւ ճանապարհի նախաձեռնության» շրջանակներում, հարկային վարչակազմի հետ համագործակցությամբ հյուրընկալեց «BRITACOM» չորրորդ տարեկան խորհրդաժողովը:

Այս տարվա խորհրդաժողովը (լիագումար նիստ եւ խորհրդի նիստ), անդամ երկրները նվիրեցին հարկային համակարգերի բարելավման քննարկումներին: Վերոնշյալ միջոցառումը՝ «Գոտու եւ ճանապարհի նախաձեռնության» բավական բարձր հարթակ է, եւ այն իրենից ներկայացնում է փորձի փոխանակման, նաեւ գործընկերային հարաբերությունների զարգացման հիանալի հնարավորություն: Միաժամանակ, խորհրդաժողովի նպատակը է՛լ ավելի խորացնել անդամ երկրների միջեւ բարեկամական հարաբերություններն ու զարգացնել գործարար շրջանների միջեւ ապագա համագործակցությունն է: Վարչական նստաշրջանը բացեց եւ մասնակիցներին ողջունելի խոսքով դիմեց Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին: Նա ընդգծեց նստաշրջանի նշանակությունը՝ «BRITACOM»-ի կայուն զարգացման ապահովման տեսանկյունից եւ նշեց, որ հարկային ոլորտում տեղեկատվության փոխանակման եւ համագործակցության սույն հարթակը հնարավոր է առաջիկայում բացառիկ դեր կատարի միջազգային հարկային օրակարգի իրականացման գործում: Հատկանշական է, որ հյուրընկալելով միջոցառումը, Վրաստանին ավտոմատորեն շնորհվում է նախագահ երկրի կարգավիճակ, իսկ եկամուտների ծառայության ղեկավարը դառնում է գործադիր խորհրդի նախագահ: Եկամուտների ծառայության պետ Լեւան Կակավան՝ նախագահի կարգավիճակով ողջունեց

հարկային վարչակազմերի թվով չորրորդ խորհրդաժողովի մասնակիցներին եւ նրանց մաղթեց հաջողություն: Խորհրդաժողովին ելույթ ունեցան եկամուտների ծառայության պետի տեղակալ Պատա Կիլաձեն, նաեւ՝ վերլուծական դեպարտամենտի եւ մեթոդաբանության դեպարտամենտի ներկայացուցիչներ Արսեն Թելոորաշվիլին ու Լիլիա Չոփուրիան: Նրանք մասնակիցներին ներկայացրին գերատեսչություններում իրականացված արդյունավետ բարեփոխումների վերաբերյալ շնորհաղեր: Խորհրդաժողովում քննարկվող թեմաներից էին հարկային վարչարարության օրակարգում ներառված այնպիսի նշանակալի հարցեր, ինչպիսիք են հարկային միջավայրի բարելավումը, վարչարարության գործընթացի բարելավումն ու հարկային ճնշման թեթևացումը, նաեւ օրենքների համապատասխանության բարելավումը, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը, գործարարության հետ ակտիվ երկխոսությունը եւ այլն: Խորհրդաժողովի եռօրյա աշխատանքի արդյունքները համրագումարեցին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետի տեղակալ Պատա Կիլաձեն եւ «BRITACOM»-ի քարտուղարության գործադիր քարտուղար Վանգ Դառշուն:



Լիագումար նիստի շրջանակներում Պատա Կիլաձեն հյուրընկալող երկրի անունից «BRITACOM»-ի հաջորդ նախագահող երկրի՝ Հոնգ Կոնգիներին եկամուտների դեպարտամենտի կոմիսիոներին փոխանցեց խորհրդանշական կազմակերպության դրոշմ, ինչով Հոնգ Կոնգը մեկ տարվա ընթացքում (2024-2025) դարձավ «BRITACOM»-ի նախագահող երկիր: «BRITACOM»-ի «Գոտու եւ ճանապարհի նախաձեռնությունը» շուրջ հարյուր անդամ երկրների վարչական միավորում է, իսկ խորհրդարանական խորհրդի անդամներն են միջազգային հարկային կազմակերպությունների ղեկավար անձինքն ու փորձագետներ: Վերոնշյալ խորհրդաժողովը անցկացվում է տարին մեկ անգամ, եւ այն հյուրընկալում է «BRITACOM»-ի նախագահ երկրի վարչակազմը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍ

ՆՈՐ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ Ե ՏԱՆԱՄՅԱԿՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ՀԻՄՆԱՆՆԴԻՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վող գյուղատնտեսական նշանակության հողամասերի թեմային վարչապետը հանդես եկավ այդ հարցով համաձայնեցնելու հայտարարելու մասին նախաձեռնությամբ, որն առնչվելու է քրեական օրենսգրքի 180 և 362 հոդվածներով նախատեսված իրավախախտումներին:

- Այդ հոդվածներով մեղադրվող անձինք պատասխանատվությունից, պատժից, այդ թվում՝ վարչական տուգանքից կազատվեն, եթե անձը՝ մինչև 2024թ. սեպտեմբերի 1-ը, պետությանը զիջի ապօրինաբար սեփականաշնորհած, պետությանը պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականության իրավունքը: Միաժամանակ, պատասխանատվությունից կազատվեն նաև նրանք, ովքեր, մինչև 2024 թվականի սեպտեմբերի 1-ը, լրիվությամբ կփոխհատուցեն պետության սեփականության ներքո գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասի ապօրինի սեփականաշնորհմամբ հասցրած վնասը: - հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետի խոսքով, համաձայնեցնելու չի առնչվի պետական պաշտոնյաներին, պետական արտադրություններին, հանրային իրավունքի իրավաբանական անձանց և ոչ կոմերցիոն իրավաբանական անձանց աշխատակիցներին, ովքեր իրավախախտում են թույլ տվել ծառայական վիճակի չարաշահմամբ, կամ՝ կազմակերպված հանցագործի խմբով:

- Պետությանը հասցրած վնասի փոխհատուցումը պետք է իրականացվի ապօրինաբար զավթած գյուղատնտեսական նշանակության հողամասը, առանց որեւէ սե-

փականության իրավունքի, պետությանը փոխանցելու ուղիով, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա՝ հողամասի արժեքին համապատասխան գումարի փոխանցմամբ: Կա՛մ վերադարձնում են հողամասը, կա՛մ փոխհատուցում են դրա արժեքը, - ընդգծեց վարչապետը:

ԳԵՐԱՁԱՆՑԻՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԸ ԿԿԱՁՄԻ 300 ԼԱՐԻ

Վրաստանի կառավարության միտումնաքաղ վարչապետը բարձրաձայնեց գործադիր իշխանության եւս մեկ նախաձեռնություն, ըստ որի՝ գերազանցիկ ուսանողների կրթաթոշակը կրկնապատկվում է եւ այսօրվանից 5000 գերազանցիկ ուսանող կատանա կրթաթոշակ, այն կկազմի 300 լարի՝ մեկ ուսանողի համար:

Իրակլի Ղարիբաշվիլու խոսքով, կառավարությունը կուժեղացնի նաեւ այն նախագիծը, որով գերազանցիկ ուսանողներին ֆինանսավորում են արտասահմանյան ավագույն բուհերում սովորելու համար:

- Մենք հնարավորինս օգնում ենք ուսանողներին: Նույնիսկ իմ առաջին վարչապետության ժամանակ մենք հիմնեցինք միջազգային կրթական կենտրոն, 1000-ից ավելի լավագույն, գերազանց ուսանողների ուղարկեցինք արտերկրի լավագույն բուհեր, եւ նրանց կրթում ենք բոլորովին անվճար: Համեմատության համար ուզում եմ հիշել նաեւ, որ նախկին իշխանության ներկայացուցիչները, այդ թվում՝ նախկին նախագահը, բյուջեից ֆինանսավորում էին սեփական երեխաներին, բյուջեից սեփական ընտանիքի անդամների կրթությունը: Սա է տարբերությունը: Ընտրեցինք հազարից ավելի լա-

վագույն, գերազանց ուսանողների եւ ուղարկեցինք արտասահմանյան լավագույն բուհերում:

Երկրորդ ուղղությունը տաղանդավոր, գերազանց, ակադեմիական բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին տեղում օգնելն է: Ներկայիս ծրագիրը տրամադրում է 150 լարի կրթաթոշակ մոտավորապես 2500 ուսանողների համար: Մենք կկրկնապատկենք այս կրթաթոշակն ու օգնությունը: Այսօրվանից յուրաքանչյուր ուսանողի համար այն կկազմի 300 լարի, իսկ 5000 աչքի ընկած ուսանողներ կստանան կրթաթոշակ: Միգուցե դա խորհրդանշական է, բայց դա ժեստ է մեր կողմից՝ գնահատելու մեր ուսանողներին: Այն չափորոշիչները, որոնք կմշակվեն, կհաստատվեն նախարարի հրամանով, - ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

ԶԻՆԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Ե ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱՎԱՐԳ

Վրաստանի կառավարության միտումնաքաղ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ Զինաստանի քաղաքացիների համար կգործարկվի անայցեգրային պայմանակարգ: Կառավարության ղեկավարի խոսքով՝ չինացի զբոսաշրջիկները համարվում են աշխարհի ամենացանկալի զբոսաշրջիկները:

- Մեր հիմնական շահերից է Զինաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունների ամրապնդումը, Զինաստանից ավելի շատ ներդրումներ ներգրավելը, ավելի շատ զբոսաշրջիկներ բերելը Վրաստան: Իմ այդ ծառայեց այս նպատակին, - նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՀԻՄՆԱՆՆԴԻՐ

ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԳՆԱԾՆ ԾԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե

ՄԵԿ ԼԻՏԲ ԴԻՉԵԼԻ ԳԻՆԸ ԿԳԵՐԱՉԱՆՑԻ 3 ԼԱՐԻՆ

Նավթամթերքի համաշխարհային շուկայում վառելանյութի գների ավելացումն իր ազդեցությունը գործեց նաեւ Վրաստանում վառելանյութի գների վրա: Այդ ուղղությամբ վերջին ամիսներին նկատվում է գների անընդմեջ ավելացում եւ հեռանկարում դրա կանգնեցման հեռանկարները գրեթե բացառվում են: Համաշխարհային շուկայում նշվում է, որ մեկ բարել նավթի արժեքը կգերազանցի 100 դոլարի շեմը, իսկ Վրաստանում չեն բացառում, որ մեկ լիտր դիզելի արժեքը կգերազանցի 3 լարին:



Նավթամթերքի համաշխարհային շուկայում, վերջին մեկ շաբաթվա ընթացքում, մեկ բարել նավթի գինը ավելացել է 6 տոկոսով եւ հիմա վաճառվում է 90 եւ ավելի դոլարով, ու դա այն դեպքում, երբ, ընդամենը երկու ամիս առաջ, մեկ բարելի գինը չէր անցնում 71 դոլարից:

Փորձագետների հավաստմամբ՝ գնի ավելացումը պայմանավորված է պահանջարկի ռիսկերի մեծացմամբ: Հունիսի 12-ից հետո «սեւ ոսկու» գինը ավելացավ 25,6 տոկոսով, իսկ տարվա սկզբից գրանցվել է 10 տոկոսի գնաճ:

Առանձնակի թանկացում է վավերացվել ռուսական նավթի ուղղությամբ: Մասնավորապես, «Ուրալ» մակնիշի ռուսական նավթի մեկ բարելի գինը տատանվում էր 70 դոլարի շրջանակներում եւ վերջին մեկ շաբաթվա ընթացքում ավելացավ 4 տոկոսով: Նաեւ ավելացնենք, որ Ռուսաստանը կես միլիոն բարելով նվազեցրել է արտահանումը, ինչը նույնպես նպաստեց գնաճին: Եվ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ նավթամթերքի մեծագույն բաժինը Վրաստան է ներկրվում Ռուսաստանից, ապա պարզ է, որ Վրաստանը չէր կարող գերծ մնալ նավթամթերքի համաշխարհային շուկայում գնաճի միտումից:

«Վրաստանի» հետ գրույցում նավթամթերք ներկրողների միության նախագահ Վախթանգ Իրաշվիլին նշեց, որ նավթամթերք արտահանող երկրներում իրավիճակը բարդացել է:

- Ռուսաստանում առկա են ներքին հիմնախնդիրներ, հենց այդ պատճառով նավթամթերքի մատակարարումների հետ կապված հիմնախնդիրներ ծագեցին: Եվ դա ոչ միայն մեզ

մոտ է, այլեւ այն երկրներում, որոնք նավթամթերքը գնում են Ռուսաստանից: Դրան ավելացնեն նաեւ, որ ժամանակին Ռուսաստանը, ինչպես նաեւ Սաուդյան Արաբիան հայտարարեցին արտահանման ծավալների նվազեցման վերաբերյալ, եւ դա իրեն արդեն զգացնել է տալիս նավթամթերքի համաշխարհային շուկայում, - ասաց Վախթանգ Իրաշվիլին եւ հավելեց, որ հիմա դիզելային վառելանյութը ներկրվում է Ռումինիայից, իսկ ինչ վերաբերում է գներին, ապա ոչ մեկը համեմ չի առնի կանխագուշակումներ անել, քանի որ իրավիճակը, իրոք, խառն է ու անկանխատեսելի:

Ի տարբերություն վառելանյութի ներկրմամբ զբաղվող գործարարների, ուրտի փորձագետների հավաստմամբ, մեկ լիտր դիզելի գինը կկազմի 3 լարի, թեպետ չեն բացառում, որ առանձին բենզալցման կայաններում այն կարող է տատանվել 2,70-2,80 լարիի շրջանակներում:

Վրաստանի նավթամթերքների ներքին շուկայում, ընթացիկ տարվա սկզբից, իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ «Գալֆի» բենզալցման կայաններում «Եվրոռեգուլյար» մակնիշի բենզինի սպառողական գինն ավելացել է 10 թեթրիով, եւ հիմա մեկ լիտրի արժեքը կազմել է 2,79 լարի (նշենք, որ հունվար-մարտին մեկ լիտր «Եվրոռեգուլյար» արժեքը 2,25 լարի), «Վիսուլի» բենզալցման կայաններում նույն մակնիշի բենզինի մեկ լիտրը արժի 2,89 լարի, հունվար-մարտի՝ 2,35 լարիի փոխարեն, իսկ «Սոկարում» «Եվրոռեգուլյար» մակնիշի բենզինը կարելի է գնել 2,82 լարիով:

որ, հաշվետու ժամանակահատվածում, վերոնշյալ ընկերությունների բենզինալցման կայաններում, սպառողական գների հարցում, գործել է պայմանավորվածություն, ինչը բացառել է գների սահմանման հարցում մրցակցությունը: Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ԱՎՏՈՄԵԲԵՆԱՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄԸ ԶԻ ԳՈՐԾԻ Ո՞՞ ԱՅՍ ՏԱՐԻ ԵՎ Ո՞՞ ԵՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ

Ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության վերաբերյալ օրենքի մշակումն ավարտվել է, թեպետ կառավարությունը դեռևս խուսափում է դրա հրապարակումից, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ օրինամախազիծը ուժի մեջ չի մտնի ոչ միայն այս տարի, այլև հաջորդ տարվա առաջին կեսին: Թեպետ դա միայն ենթադրություն է եւ ոչ ավելին:

Ներկա դրությամբ միայն հայտնի է, որ Վրաստանի կառավարությունը ավտոմեքենաների պարտադիր ապահովագրման օրինամախազիծը խորհրդարան է ներկայացվելու աշնանային նստաշրջանում: Ըստ օրինամախազի՝ ավտոմեքենաների սեփականատերերը պարտավոր կլինեն ձեռք բերել մեքենաների պարտադիր ապահովագրման պոլիս եւ մուծեն ապահովագրության սակագինը:

Ինչպես նշված է կառավարության հիմնավորման փաթեթում, ավտոտրանսպորտային միջոցների թվաքանակի աճի պայմաններում, ավելանում է ճանապարհա-տրանսպորտային միջադեպերի թիվը, ավելանում է նաեւ այդ միջադեպերի արդյունքում զոհված եւ վնասվածքներ ստացող մարդկանց թիվը:

«Ճանապարհա-տրանսպորտային միջադեպերով պայմանավորված ծախսերի կատարումը հիմնախնդրային է, եւ դա պահանջում է համակարգային այլ մոտեցում, ինչը թույլ կտա միջադեպի հետևանքով տուժածներին փոխհատուցում ստանալ նույնիսկ այն դեպքում, երբ վթարի մասնակից կողմերից մեկը ապահովագրված չէ, կամ անհայտ է»,- ասված է կառավարության

հիմնավորման փաթեթում:

Նաեւ նշված է, որ ներկա դրությամբ Վրաստանում գրանցված է 1,7 միլիոն մեքենա, թեպետ ակտիվ գործող մեքենաների թիվը կազմում է մոտ 700 հազար: Ապահովագրական ասոցիացիայի տվյալներով, ճանապարհա-տրանսպորտային միջադեպերի 7-10 տոկոսը բժշկական ուղղությամբ է: Խոսքը վերաբերում է բժշկական ծախսերին եւ, պարտադիր ապահովագրության օրենքի գործարկման դեպքում, պետությունը կկարողանա տնտեսել 30-40 միլիոն լարի, ինչը թույլ կտա ֆինանսավորել հազարավոր մարդկանց բժշկական սպասարկման ծախսերը:

Ընդհանրապես, մեքենաների պարտադիր ապահովագրությունը բոլորի համար տեսականորեն պետք է ընդունելի լինի, թեպետ շատերը կասկածում են, որ ապահովագրական ընկերությունները, անհրաժեշտության դեպքում, արդարացի մոտեցում կցուցաբերեն եւ կփոխհատուցեն վնասը: Հարցի կարգավորման միակ արդարացված ուղին մարդկանց նախօրոք հստակ է ճշգրիտ տեղեկատվության փոխանցումն է, ինչը կօգնի օրենքի լիարժեք կիրարկմանը:

ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՅ ԱՎՏՈՎԹԱՐԻ ԶՈՂ Ե ԴԱՐՅԵԼ 180 ՄԱՐԿ

Ընթացիկ տարվա սկզբից Վրաստանի ճանապարհներից ավտովթարի զոհ է դարձել 180 մարդ:

Վրաստանի ներքին գործերի նախարարության տարածած հաղորդագրության համաձայն՝ ընթացիկ տարվա ապրիլ-հունիս ամիսներին, երկրում գրանցվել է ծանր հետևանքներով 1427 ավտոմեքենայի միջադեպ, որի արդյունքում վնասվել է 1850 եւ զոհվել է 90 մարդ: Ավտովթարների թվով առաջինը Թբիլիսի է, այստեղ վավերացվել է 706 միջադեպ, երկրորդը՝ Աջարիան՝ 150: Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է վրաեր-

թի 414 դեպք, 167 ավտոպատահար տեղի է ունեցել մոտոցիկլիստների մասնակցությամբ: Գրանցված վթարների 34 դեպքում վարորդը գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ, 80 դեպքում՝ պատճառը արագության գերազանցումն է, 82 դեպքում՝ հանդիպակած կողմով երթևեկությունը կամ շրջանցի կանոնների խախտումը: Հիսուսուրթի դեպքում՝ գրանցվել է կանոնների խախտում հետիոտների կողմից:

ՏՈՒՊԱՆԵ՝ ԱՆՄՐՅՈՒՆԱԿ ԳՆԵՐՈՎ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՀԱՄԱՐ

Տարածված տեղեկատվության համաձայն, անցյալ տարվա մարտ-օգոստոս ամիսներին, ավտոմոբիլային վառելանյութի շուկայում բարձր գների պահպանման պատճառով, Վրաստանի մրցակցության գործակալությունը տուգանել է վառելանյութի մատակարարման

5 խոշոր ընկերությունների: Մասնավորապես, «Գալֆ», «Ռոմպետրոլ», «Լուկոյլ», «Սոկար» եւ «Վիսուլի» ընկերությունները տուգանվել են, ընդհանուր առմամբ, 4 միլիոն լարի գումար: Գործակալության կողմից իրականացված ստուգումների արդյունքում պարզվել է,